

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ վարչության  
«26» հունիսի 2008թ.  
թիվ 01/152-733Լ որոշմամբ

Վարչության նախագահ՝

Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ \_\_\_\_\_



«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

## **ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1. Բրոքերային գործունեության իրականացման հիմնական կանոններով (այսուհետ՝ Կանոններ) սահմանվում են «Արդշինհինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) հաճախորդների կողմից Բանկ ներկայացված արժեթղթերով գործարքների կնքման պատվերների ընդունման, հաղորդման, ինչպես նաև հաճախորդների հաշվին Արժեթղթերով գործարքների կատարման (այսուհետ՝ Բրոքերային ծառայություններ) կարգն ու պայմանները:

1.2. Սույն Կանոններին համապատասխան Բանկը մատուցում է Բրոքերային ծառայություններ ՀՀ տարածքում, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված օտարերկրյա պետությունների ցանկում ընգրկված որևէ պետությունում՝ հրապարակային առաջարկին (վաճառքին) և (կամ) առևտրին թույլատրված կամ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաների ցանկում ընգրկված որևէ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերով:

## **ԳԼՈՒԽ 2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ**

Լրիվ անվանումը՝ *Արդյունաբերության և Շինարարության Ինվեստիցիոն Բանկ Փակ Բաժնետիրական Ընկերություն*

Կրճատ

անվանումը՝ *«Արդշինհինվեստբանկ» ՓԲԸ*

Գտնվելու վայրը՝ *Հայաստանի Հանրապետություն, 0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1*

Պետական գրանցում՝ *Թիվ 83, տրված 25.02.2003թ.*

Բանկային գործունեության լիցենզիա՝ *Թիվ 83, տրված 27.02.2003թ.*

## **ԳԼՈՒԽ 3. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Հաճախորդ** - ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի հետ Բանկն ունի բրոքերային ծառայությունների մատուցման գործող պայմանագիր (*Հավելված 9*),

**Արժեթուղթ** - ՀՀ օրենսդրությամբ և գործարար շրջանառության սովորույթներով որպես արժեթուղթ համարվող ցանկացած գույքային իրավունք,

**Կարգավորվող շուկա** - հանրության համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն մատչելի կազմակերպական, իրավական և տեխնիկական միջոցների համակարգ, որը կանոնավոր կերպով Արժեթղթերի առքի եւ վաճառքի առաջարկների հանդիպման վայր կամ միջոց է կազմակերպում, տրամադրում, ապահովում կամ իրականացնում է Արժեթղթերով առևտրի կազմակերպման սովորաբար իրականացվող գործառույթներ: Կարգավորվող շուկան ներառում է ֆոնդային բորսան և այլ կարգավորվող շուկաներ,

**Ֆոնդային գործառնությունների բաժին** - Հաճախորդների բրոքերային սպասարկումը իրականացնող Բանկի կառուցվածքային ստորաբաժանում,

**Ներբանկային գործառնությունների բաժին** - Բանկի ստորաբաժանում, որն իրականացնում է Հաճախորդների արժեթղթերի, դրամական միջոցների և Հաճախորդների Պատվերների հիման վրա իրականացված գործարքների հաշվառում և վերջնահաշվարկ,

**Գործարքի վավերագիր** - գործարք կնքող պատասխանատու աշխատակցի կողմից կազմվող, գործարքի կնքումը հավաստող և հաշվառողին ներկայացվող փաստաթուղթ,

**Սպասարկող** - Բանկի պատասխանատու աշխատակից, որը հաճախորդներից ընդունում է պատվերները և այդ պատվերների հիման վրա կատարված գործարքների գծով Հաճախորդներին ներկայացնում է հաշվետվություններ,

**Գործարք իրականացնող** - Բանկի ֆոնդային գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակից, որը Սպասարկողից ստացված հայտերի հիման վրա իրականացնում է Արժեթղթերի առք ու վաճառք,

**Հաշվառող** - Բանկի ներբանկային գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակից, որը Գործարք իրականացնողից ստացված գործարքի վավերագրի հիման վրա իրականացնում է Հաճախորդի գործարքների վերջնահաշվարկը,

**Պայմանագիր** - բրոքերային ծառայություններից օգտվելու համար Բանկի և Հաճախորդի միջև կնքված փաստաթուղթ, որում ներառվում են Հաճախորդի արժեթղթերով և դրամական միջոցներով գործարքի կնքման և կատարման հետ կապված կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների դիմաց վճարումների իրականացման կարգը,

**Պատվեր** - հաճախորդի կողմից Բանկին տրվող և Հաճախորդի արժեթղթերով և(կամ) դրամական միջոցներով Բանկի կողմից գործարքի կնքման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ,

**Հանձնարարական** - պատվերում նշվող տեղեկությունների համախումբ, որը ներառում է հանձնարարականի հիման վրա գործարքի կնքման համար անհրաժեշտ գնային, ծավալային և ժամանակային պայմանները,

**Հերթ** – բոլոր Հաճախորդների կողմից Բանկ ներկայացված, բայց դեռևս չկատարված Պատվերների հաջորդականություն: Հաճախորդների Պատվերները կատարվում են ըստ դրանց ստացման հերթականության՝ ելնելով պատվերի տեսակից և շուկայի իրավիճակից,

**«Բավարարել լրիվ» հանձնարարական** - Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի կատարում բացառապես պատվերում նշված քանակով Արժեթղթերի գնման կամ վաճառքի պայմանով,

**«Բավարարել մասնակի» հանձնարարական** - Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի կատարումը մասնակիորեն՝ մնացորդը Հերթում ընդգրկելու պայմանով,

**«Հանել մնացորդը» հանձնարարական** - Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի անմիջապես կատարում պատվերում նշված Արժեթղթի քանակի հնարավոր առավելագույն չափով՝ մնացորդը Հերթում ընդգրկելու պայմանով,

**«Անմիջապես բավարարել կամ հանել» հանձնարարական** - Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի անմիջապես կատարում՝ Պատվերում նշված գնով և լրիվ քանակով՝ հակառակ դեպքում Պատվերը չընդգրկելով Հերթում,

**«Պահել հերթում մինչև բավարարումը» հանձնարարական** - Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է, որ Պատվերը կարող է մնալ Հերթում՝ մինչև դրանում նշված լրիվ քանակով Արժեթղթերի գնումը կամ վաճառքը,

**Շուկայական հանձնարարական** - Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի կատարում՝ տվյալ պահին շուկայում գոյություն ունեցող լավագույն գնով անմիջապես Արժեթուղթ գնելու կամ վաճառելու պայմանով,

**Գնման/վաճառքի լիմիտային հանձնարարական** - Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի կատարում՝ Պատվերում ֆիքսված գնից ոչ բարձր (ոչ ցածր) գնով Արժեթուղթ գնելու (վաճառելու) պայմանով,

**Գնման/վաճառքի ստոպ հանձնարարական** - Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի կատարում (Արժեթղթերի առք/վաճառք)՝ Պատվերում նշված գնին բորսայում կամ բորսայից դուրս տվյալ Արժեթղթի գինը հասնելու դեպքում,

**Գնման/վաճառքի ստոպ լիմիտային հանձնարարական** - Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված հանձնարարական, որը միաժամանակ ներառում է Գնման (վաճառքի) լիմիտային հանձնարարականը մի գնով և Գնման (վաճառքի) ստոպ հանձնարարական մեկ այլ գնով,

**Բորսայական գործարք** - ֆոնդային բորսայի կանոններով սահմանված կարգով ֆոնդային բորսայում կնքված գործարք ,

**Արտաբորսայական գործարք** - ֆոնդային բորսայից դուրս կատարված գործարք:

#### **ԳԼՈՒԽ 4. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

4.1. Բանկը, ի դեմս Սպասարկողի, մինչև Պայմանագիր կնքելը, Հաճախորդին է ներկայացնում հետևյալ տեղեկությունները՝

- Բանկի և վերջինիս կողմից առաջարկվող Բրոքերային ծառայությունների մասին, Արժեթղթերի տեսակների և հնարավոր ռիսկերի մասին,
- Բրոքերային ծառայությունների մատուցման ընթացքում առաջացող ծախսերի և միջնորդավճարների մասին:

#### **ԳԼՈՒԽ 5. ՏԵՂԵԿԱՑՈՒՄՆԵՐ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

5.1. Բանկը տեղեկացնում է Հաճախորդին, որ Արժեթղթերում ցանկացած ներդրում իր բնույթով հանդիսանում է ռիսկային: Արժեթղթերի շուկայում գործարքներ կատարելիս ներդրողը առնչվում է հետևյալ ռիսկերի հետ.

**Ֆինանսական գործիքների գների փոփոխության ռիսկ.** Արժեթղթերի շուկայական գները և դրանց փոփոխությունները չեն գտնվում Բանկի հսկողության տակ: Նշված պատճառով Արժեթղթերում

ներդրման դեպքում հնարավոր է նաև Հաճախորդի պորտֆելի արժեքի նվազում, ընդհուպ մինչև ամբողջ պորտֆելի կորուստ:

**Իրացվելիության նվազման ռիսկ.** Այս ռիսկը կապված է տվյալ գործիքի նկատմամբ շուկայի այլ մասնակիցների հետաքրքրության նվազման հետ: Ֆինանսական գործիքի իրացվելիությունը կախված է թողարկողների կորպորատիվ գործողություններից, նրանց ֆինանսատնտեսական գործունեությունից, ընդհանուր շուկայի վիճակից, բորսաների և առևտրային հրապարակների ներքին կանոններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ տվյալ ֆինանսական գործիքի գնի, հետևաբար նաև Հաճախորդի պորտֆելի արժեքի վրա:

**Օրենսդրության փոփոխության ռիսկ.** Այս ռիսկը կապված է պետական օրենսդիր մարմինների և շուկաները կարգավորող այլ մարմինների գործողությունների հետ, որի հետևանքով Հաճախորդը կարող է կրել կորուստներ:

**Ենթակառուցվածքային ռիսկ.** Այս ռիսկը կապված է դեպոզիտարիաների, բորսաների, հաշվարկաքլիրինգային կազմակերպությունների աշխատանքների հետ, որոնց գործունեությունում ընդհատումները կարող են բերել Հաճախորդի ակտիվների (ինչպես դրամական միջոցների, այնպես էլ Արժեթղթերի) անվերադառնալի կորուստների:

**Էլեկտրոնային առևտրային համակարգերի օգտագործման հետ կապված ռիսկեր.** Այս ռիսկերը կապված են համակարգչային սարքավորումների, ծրագրային ապահովման անսարքության առաջացման, էլեկտրասնուցման, ինտերնետ պրովայդերների հետ կապված խնդիրների, կապի ընդհատումների և այլնի հետ, որոնք կարող են առաջ բերել Հաճախորդի ակտիվների կորուստներ:

**Տեղեկատվության էլեկտրոնային փոխանակման հետ կապված ռիսկեր.** Հաճախորդը տեղեկացվում է այն մասին, որ ներդրումային գործունեությունը պարունակում է ռիսկեր՝ կապված մատուցվող ծառայությունների էլեկտրոնային բնույթի հետ, ինչպիսիք են, օրինակ, հուսալի կապի բացակայությունը, էլեկտրաէներգիայի անջատման հնարավորությունը, ծրագրային ապահովման աշխատանքի խաթարումը և այլն: Բանկը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործունեության հետևանքով էլեկտրոնային առևտրի համակարգերի աշխատանքի ընդհատման, ինչպես նաև երրորդ անձանց գործունեության արդյունքում Բանկի և Հաճախորդի միջև փոխանցվող տեղեկատվության՝ երրորդ անձանց հասանելի դառնալու համար:

**Այլ ռիսկեր.** Վերը թվարկված ռիսկերի ցանկը սպառիչ չէ: Ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել նաև այլ ռիսկերով:

## **ԳԼՈՒԽ 6. ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

6.1. Բանկը, ի դեմս Սպասարկողի, նախքան Հաճախորդի հետ Պայմանագրի կնքելը, Հաճախորդից պահանջում է տեղեկություններ վերջինիս՝ Բրոքերային ծառայությունների և Արժեթղթերի վերաբերյալ գիտելիքների ու փորձի և ներդրումային ռիսկերը կրելու ցանկության և կարողության աստիճանի մասին (*Հավելված 1*):

6.2. Այն դեպքում, երբ Սպասարկողը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ տվյալ ծառայությունը կամ Արժեթուղթը չեն համապատասխանում Հաճախորդի պահանջներին, ապա Սպասարկողը զգուշացնում է Հաճախորդին այդ մասին:

6.3. Այն դեպքում, երբ Հաճախորդը չի տրամադրում Կանոնների 6.1. կետում նշված տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Սպասարկողը զգուշացնում է Հաճախորդին այն մասին, որ վերջինիս վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյո՞ք տվյալ ծառայությունը կամ Արժեթուղթը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին:

6.4. Սպասարկողը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգի, դասակարգում է վերջինիս որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդ, ընդ որում Հաճախորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը դասակարգման արդյունքների վերաբերյալ, եթե վերջինս համաձայն է դասակարգման արդյունքների հետ:

## **ԳԼՈՒԽ 7. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԵՎ ԴԵՊՈ ՀԱՇՎՆԵՐԻ ԲԱՅՈՒՄԸ**

7.1. Բանկը Հաճախորդներին բրոքերային ծառայություններ մատուցում է Բանկի և Հաճախորդի միջև կնքվող Պայմանագրի հիման վրա:

7.2. Հաճախորդներին Բրոքերային ծառայություններ մատուցելու համար Բանկը Հաճախորդի համար բացում է բրոքերային և դեպո հաշիվներ:

7.3. Բրոքերային հաշիվը չի հանդիսանում բանկային հաշիվ և դրա մնացորդների նկատմամբ տոկոսներ չեն հաշվարկվում:

7.4. Բրոքերային հաշվի բացման համար ֆիզիկական անձ հանդիսացող Հաճախորդը Բանկ է ներկայացնում *Հավելված 2.1-ով*, իսկ իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդը *Հավելված 2.2-ով* սահմանված տեղեկությունները:

7.5. Դեպո հաշվների բացումը իրականացվում է Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

#### **ԳԼՈՒԽ 8. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՈՒՏՔԱԳՐՈՒՄԸ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ**

8.1. Դրամական միջոցների մուտքագրումը բրոքերային հաշվին կարող է իրականացվել միայն անկանխիկ եղանակով՝ Հաճախորդի անունով Բանկում կամ ՀՀ այլ բանկում բացված բանկային հաշվից Բանկի թղթակցային հաշվին փոխանցման միջոցով: Վերջինիս վավերապայմանները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում:

8.2. Փոխանցման հանձնարարագրի լրացման ժամանակ «Վճարման նպատակը» դաշտում Հաճախորդը պարտավոր է լրացնել Բանկի հետ կնքված Պայմանագրի համարը, կնքման ամսաթիվը և Հաճախորդի կոդը:

8.3. Դրամական միջոցների մուտքագրումը բրոքերային հաշվին կատարվում է ոչ ուշ, քան Բանկի թղթակցային հաշվին դրանց փաստացի մուտքագրման օրվան հաջորդող բանկային օրվա գործառնական օրվա ավարտը:

8.4. Այն դեպքում, երբ դրամական միջոցների փոխանցումը իրականացվում է Բանկում գտնվող բանկային հաշվից, ապա դրամական միջոցների մուտքագրումը բրոքերային հաշվին կատարվում է նույն բանկային օրվա ընթացքում:

8.5. Արժեթղթերից ստացված շահաբաժինները/տոկոսները, ինչպես նաև Արժեթղթերի մարումից առաջացած դրամական միջոցները Բանկի կողմից մուտքագրվում են Հաճախորդի բրոքերային հաշվին դրանց փաստացի ստացման բանկային օրվա ընթացքում:

#### **ԳԼՈՒԽ 9. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՀԱՇՎԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏԿԱՆՉՈՒՄԸ**

9.1. Բրոքերային հաշվից դրամական միջոցների հետկանչումը իրականացվում է հատուկ դրամական միջոցների հետ կանչման հանձնարարականի (*Հավելված 3*) միջոցով, որը Հաճախորդի կողմից ներկայացվում է Սպասարկողին:

9.2. Բրոքերային հաշվից դրամական միջոցների փոխանցումն իրականացվում է միայն Հաճախորդի բանկային հաշվին: Այս պահանջի պահպանման համար Բանկը, ի դեմս Սպասարկողի, համեմատում է հանձնարարականում և *Հավելված 2.1-ում* կամ *Հավելված 2.2-ում* նշված հաշվի համարները:

9.3. Սպասարկողը հանձնարարականը պատճենի հետ միասին ներկայացնում է Հաշվառողին: Ընդ որում Հայտի բնօրինակը մնում է Հաշվառողի մոտ, իսկ պատճենը՝ «Ընդունված է» նշագրմամբ, ընդունման ժամանակի նշումով և Հաշվառողի ստորագրությամբ վերադարձվում է Սպասարկողին:

9.4. Դրամական միջոցների հետ կանչման հանձնարարականները Բանկի կողմից ընդունվում են ցանկացած բանկային օրվա ժամը 10<sup>00</sup>-ից մինչև 16<sup>00</sup>-ը:

9.5. Այն դեպքում, երբ Դրամական միջոցների հետկանչումն իրականացվում է Բանկում գտնվող բանկային հաշվին, ապա այն կատարվում է նույն բանկային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ երկու բանկային օրվա ընթացքում:

9.6. Դրամական միջոցների հետկանչման հանձնարարականները Բանկի կողմից ընդունվում են միայն Հաճախորդի դրամական միջոցների ազատ մնացորդի սահմաններում:

9.7. Այն դեպքում, երբ Հաճախորդի դրամական միջոցների հետ կանչման հանձնարարականում նշված գումարը գերազանցում է ազատ մնացորդը, Բանկը իրավունք ունի ինչպես սեփական հայեցողությամբ մերժել հանձնարարականի կատարումն, այնպես էլ կատարել այն՝ ազատ դրամական միջոցների սահմաններում:

#### **ԳԼՈՒԽ 10. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԸ**

10.1. Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերը ներառում է *Հավելված 3-ում* ներկայացված տեղեկությունները:

10.2. Պայմանագրով կարող են նախատեսվել այլ տեղեկություններ՝ սահմանված Բանկի և Հաճախորդի փոխադարձ համաձայնության:

10.3. Հաճախորդի Արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում Հաճախորդի կողմից սույն Կանոնների *Հավելված 4-ին* համապատասխան լրացված և թղթային կամ էլեկտրոնային եղանակով Սպասարկողին ներկայացված Պատվերը: Վերջինս Սպասարկողին ներկայացված է համարվում, եթե այն ներկայացվել է Հաճախորդի կողմից անձամբ

կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից, կամ ներկայացվել է Բանկի հետ փոխհամաձայնեցված կապի միջոցներով:

10.4. Թղթային եղանակով Պատվերը ներկայացնելու դեպքում Սպասարկողը ստուգում է Պատվերը ներկայացնող անձի լիազորությունները:

10.5. Հաճախորդի կողմից թղթային ձևով Պատվերը Սպասարկողին ներկայացվում է 2 օրինակից: Մեկ օրինակը մնում է Սպասարկողի մոտ, իսկ մյուսը՝ «Պատվերն ընդունված է» նշագրմամբ և Սպասարկողի ստորագրությամբ վերադարձվում է Հաճախորդին:

10.6. Հաճախորդի կողմից էլեկտրոնային եղանակով Պատվեր ներկայացնելու դեպքում՝ Սպասարկողը Հաճախորդին է ուղարկում Պատվերի ընդունման կամ մերժման մասին համապատասխան էլեկտրոնային հաղորդագրություն:

10.7. Հաճախորդի կողմից Պատվերի թղթային տարբերակի ներկայացման պահ է համարվում Սպասարկողի կողմից այն ընդունելու պահը: Պատվերը Բանկի կողմից ընդունված է համարվում Սպասարկողի կողմից այն ստորագրելու պահից, իսկ էլեկտրոնային եղանակով ուղարկված Պատվերի դեպքում՝ դրա ընդունելու վերաբերյալ համապատասխան էլեկտրոնային հաղորդագրության ուղարկուման պահից:

10.8. Բանկն իրավունք ունի մերժել Հաճախորդի Պատվերի ընդունումը հետևյալ դեպքերում.

- 10.8.1. Հաճախորդի (նրա լիազոր ներկայացուցչի) անձը հաստատող փաստաթղթի անհամապատասխանության կասկածի դեպքում,
- 10.8.2. Սույն Կանոնների *Հավելված 3-ով* սահմանված ձևից շեղումներով կամ ջնջումներով ներկայացված Պատվերի դեպքում,
- 10.8.3. եթե Հաճախորդի դրամական միջոցները կամ Արժեթղթերը, որոնց նկատմամբ տրվել է Պատվերը, ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ արգելանքի տակ են գտնվում (արգելադրված են),
- 10.8.4. եթե Հաճախորդի բրոքերային կամ դեպո հաշվում բացակայում են համապատասխան դրամական միջոցները (ներառյալ գործարքի կնքման համար անհրաժեշտ միջնորդավճարները) և/կամ Արժեթղթերը,
- 10.8.5. եթե Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերով գործարքի կատարումը հակասում է Հաճախորդի ներդրումային փորձին և նպատակներին,
- 10.8.6. Պատվերում նշված պայմանների՝ ՀՀ օրենսդրությանն ու Կանոններին անհամապատասխանության դեպքում:

10.9. Հաճախորդը կարող է հետ կանչել ներկայացված Պատվերը կամ դրանում՝ ըստ Հանձնարարականի գնային, քանակական կամ ժամանակային պայմանների փոփոխություններ կատարել, եթե տվյալ Պատվերով գործարք դեռևս չի կնքվել Բանկի կողմից:

10.10. Բանկն իրավունք ունի հրաժարվել Հաճախորդի Պատվերը կատարելուց այն դեպքում, երբ Պատվերի կատարումը հնարավոր չէ՝ կապված շուկայական իրավիճակների, գործարար շրջանառության սովորույթների և այլ օբյեկտիվ հանգամանքների հետ:

10.11. Պատվերը կատարելուց հրաժարվելու դեպքում Բանկն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հաճախորդին՝ վերջինիս Պատվերը կատարելուց հրաժարվելու վերաբերյալ համապատասխան հաղորդագրություն կամ ծանուցում ուղարկելու միջոցով:

10.12. Հաճախորդն իրավունք ունի Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխել սույն Կանոնների Հավելված 1-ի համաձայն ներկայացված տեղեկությունները:

10.13. Հաճախորդն իրավունք ունի իր բրոքերային հաշվի մնացորդը կամ դեպո հաշվում հաշվառվող Արժեթղթերի ծավալը գերազանցող գործարք կատարել, եթե Բանկի հետ ունի մարժինալ գործարքների կնքման համաձայնագիր:

10.14. Հաճախորդը կարող է Արժեթուղթ ձեռք բերելու նպատակով Բանկից ստանալ փոխառություն կամ վարկ, ինչպես նաև իրականացնել կարճ վաճառք, եթե Բանկի հետ ունի համապատասխան լրացուցիչ համաձայնագիր:

## **ԳԼՈՒԽ 11. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

11.1. Սպասարկողը, Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերի ընդունումից հետո, Գործարք իրականացնողին է փոխանցում Պատվերի հիման վրա կազմված Հայտը (*Հավելված 4.1*) երկու օրինակից՝ ստորագրված Սպասարկողի և վերջինիս ստորաբաժանման ղեկավարի կողմից: Հայտի մեկ օրինակը մնում է Գործարք իրականացնողի մոտ, իսկ մյուս օրինակը «Ընդունված է» նշագրմամբ, ընդունման ժամանակի նշումով և Գործարք իրականացնողի ստորագրությամբ վերադարձվում է Սպասարկողին: Գործարք իրականացնողը Հայտը ներկայացնում է Հաշվառողին, որն իրականացնում

է դրամական միջոցների/Արժեթղթերի սառեցում և Հայտը վերադարձնում է Գործարք իրականացնողին՝ «դրամական միջոցները/արժեթղթերը սառեցված են» նշագրմամբ և սառեցման ժամի մասին նշումով:

11.2. Բանկի կողմից գործարքները կնքվում են.

11.2.1. ֆոնդային բորսայում՝ Բանկի կողմից բորսայական առևտրի ընթացքում Արժեթղթի գնման/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով,

11.2.2. արտաբորսայում՝ Բանկի կողմից ֆոնդային բորսայից դուրս արժեթղթի գնման/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով:

11.3. Ֆոնդային բորսայում Բանկի կողմից գործարքները կնքվում և կատարվում են ֆոնդային բորսայի կողմից սահմանված կանոններին համապատասխան:

11.4. Արտաբորսայական գործարքները Բանկի կողմից կատարվում են Արժեթղթերի շուկան կարգավորող Հայաստանի Հանրապետության և այն երկրի օրենսդրության համաձայն, որտեղ առևտրին թույլատրված Արժեթղթերով կնքվում է արտաբորսայական գործարքը:

11.5. Հաճախորդի Պատվերները կատարելու համար Բանկն իր հայեցողությամբ իրավունք ունի ներգրավել նաև այլ կազմակերպություններ, այդ թվում՝ Արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող էլեկտրոնային առևտրային համակարգերից:

11.6. Հաճախորդների կողմից ներկայացված Պատվերների հիման վրա Սպասարկողի կողմից Գործարք իրականացնողին ներկայացված Հայտերը ենթակա են առաջնահերթ կատարման Բանկի սեփական հայտերի նկատմամբ:

11.7. Թույլատրվում է Պատվերում նշված Հանձնարարականի կատարումը մաս առ մաս, եթե Պատվերով այլ բան նախատեսված չէ:

11.8. Լիմիտային հանձնարարականը Բանկի կողմից կատարվում է՝ կախված շուկայի ընթացիկ իրավիճակից:

11.9. Բանկն իրավունք ունի կատարել Լիմիտային հանձնարարական ավելի շահավետ պայմաններով, քան նշված է Պատվերում: Այդ դեպքում Հաճախորդի նշած գնի և կատարման գնի տարբերության կեսը հանդիսանում է լրացուցիչ պարգևավճար Բանկի համար, որը գանձվում է Բանկի կողմից, Հաճախորդի՝ Բանկում բացված բորքերային հաշվից:

11.10. Հաճախորդի Պատվերի համար հնարավորինս լավագույն պայմաններով կատարման կարգը սահմանված է Բանկի «Պատվերների կատարման ընթացակարգով»:

## **ԳԼՈՒԽ 12. ԳՈՐԾԱՐՔԻ ՎԱՎԵՐԱԳԻՐԸ, ԴՐԱՆՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

12.1. Գործարքը կնքելուց անմիջապես հետո Գործարք իրականացնողի կողմից լրացվում է Գործարքի վավերագիրը *(Հավելված 5):*

12.2. Գործարքի վավերագիրը կազմվում է երկու օրինակից, որոնք գործարքի կնքման պահից հետո ներկայացվում են Հաշվառողին: Գործարքի վավերագիրը Հաշվառողին է ներկայացվում է տվյալ Գործառնական օրվա ընթացքում, եթե գործարքը կնքվել է մինչև տվյալ Գործառնական օրվա ավարտը: Իսկ տվյալ գործառնական օրվա ավարտից հետո կնքված Գործարքի վավերագիրը Հաշվառողին է ներկայացվում մինչև տվյալ գործարքի կնքմանը հաջորդող Գործառնական օրվա ավարտը: Ընդ որում Գործարքի վավերագրի մեկ օրինակը մնում է Ներբանկային գործառնությունների բաժնում, իսկ մյուս օրինակը «Ընդունված է» նշագրմամբ, ընդունման ժամանակի նշումով և Հաշվառողի ստորագրությամբ վերադարձվում է Գործարք իրականացնողին:

12.3. Գործարքի վավերագրում նշված գործարքի կատարման օրը, Ներբանկային գործառնությունների բաժինը իրականացնում է գործարքի գծով բոլոր հաշվարկները և կատարում է համապատասխան ձևակերպումներ:

12.4. Ձևակերպումները կատարելուց հետո Հաշվառողը Սպասարկողին է ներկայացնում Գործարքի կնքման վերաբերյալ հաշվետվությունը (այսուհետ՝ Ընթացիկ հաշվետվություն) *(Հավելված 6):*

## **ԳԼՈՒԽ 13. ՀԱՃԱՆՈՐԴԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

13.1. Պատվերի հիման վրա Արժեթղթերի գնման կամ վաճառքի յուրաքանչյուր գործարքը կնքելուց հետո Սպասարկողը մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, Հաճախորդի հետ համաձայնեցված կապի միջոցներով, գործարքի կնքման վերաբերյալ վերջինիս ներկայացնում է Ընթացիկ հաշվետվություն *(Հավելված 6):*

13.2. Սպասարկողը, յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 15-ը, համաձայնեցված կապի միջոցներով, Հաճախորդին տրամադրում է վերջինիս Պատվերների հիման վրա կատարված գործարքների և Արժեթղթերով ու դրամական միջոցներով հաշիվների շարժի վերաբերյալ հաշվետվություններ (այսուհետ՝ Պարբերական հաշվետվություններ) *(Հավելված 7 և Հավելված 8):*

#### **ԳԼՈՒԽ 14. ՀԱՐԿՈՒՄ**

14.1. ՀՀ օրենսդրությանը համաձայն՝ ռեզիդենտ իրավաբանական անձ հանդիսացող Հաճախորդները ինքնուրույն են իրականացնում Արժեթղթերով գործարքների արդյունքում ծագած հարկային պարտավորությունների հաշվառումն ու վճարումը: Բանկն արժեթղթերի գործարքների վերաբերյալ բավարար տեղեկություն է տրամադրում Հաճախորդներին, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան ինքնուրույն իրականացնել իրենց հարկային պարտավորությունների հաշվարկներն ու մուծումները:

14.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում Բանկն ինքն է իրականացնում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ Հաճախորդների հարկային պարտավորությունների հաշվառումն ու վճարումը:

#### **ԳԼՈՒԽ 15. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ**

15.1. Սույն Կանոններում փոփոխությունները և լրացումները կատարվում են Բանկի կողմից միակողմանիորեն:

15.2. Սույն Կանոններում փոփոխությունների (լրացումների) վերաբերյալ Հաճախորդը տեղեկանում է Բանկի վեբ-կայքից՝ [www.ashib.am](http://www.ashib.am): Կայքում պարտադիր տեղադրվում են ինչպես Կանոններում կատարված փոփոխությունները (լրացումները), այնպես էլ փոփոխությունների տեղակայման ամսաթիվը:

15.3. Սույն Կանոններում Բանկի կողմից կատարված բոլոր փոփոխություններն ու լրացումները, որոնք կատարվել են Բանկի նախաձեռնությամբ և կապված չեն գործող օրենսդրության փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում և Հաճախորդի համար դառնում են պարտադիր կիրառելի Բանկի վեբ-կայքում տեղադրելուց 10 (տաս) օր հետո:

15.4. Բանկի կողմից սույն Կանոններում կատարված բոլոր փոփոխությունները, որոնք կապված են գործող ՀՀ օրենսդրական և առևտրի կազմակերպիչների իրավական ակտերի փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում վերջիններիս ուժի մեջ մտնելուց հետո: